ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հուլիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

103
(2953)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔԱՂԱՔԱՑԻՆ, ՓԱՍՏՈՐԵՆ, «ՏՈՒԳԱՆՔԻ ՄԱՏԵՐԻԱԼ» Է

ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայությունը միայն 2024 թվականի հունվարի 1-ից 25-ն ընկած ժամանակահատվածում երթեւեկության խախտումների փաստերով շուրջ 515.430 արձանագրություն է կազմել:

«Ժողովուրդ» օրաթերթին այս մասին հայտնում են պարեկային ծառայության կազմակերպման վարչությունից:

Այսպիսով՝ կազմված արձանագրություններից առյուծի բաժինը՝ 89.921-ը, առանց ամրագոտին ամրակցված վարելու հիմքով է կազմվել, 44.320 արձանագրություն արագությունը գերազանցելու հիմքով է կազմվել, 10.408-ը՝ ոչ սթափ վարելու, 14.869-ը՝ վարելիս հեռախոսով խոսելու հիմքով:

Պարեկային ծառայությունը նույն ժամանակահատվածում 13.066 արձանագրություն է կազմել վարելիս ծխախոտ օգտագործելու հիմքով, իսկ 15.352-ը՝ մգացված ապակիներով վարելու փաստերով:

Մեքենաների արտաքին լուսային սարքերի չաշխատելու հիմքով 22.328 արձանագրություն է կազմվել, եւս 11.275 արձանագրություն կազմվել է մեքենան երկրորդ շարքում կայանելու, իսկ 1054՝ մայթին կայանելու հիմքերով:

Պարեկային ծառայությունը նույն ժամանակահատվածում 17.595 արձանագրություն կազմել է հետիոտների համար չնախատեսված հատվածով անցնելու հիմքով, եւս 274.846 արձանագրություն՝ այլ խախտումների հիմքով:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է հրապարակել, որ պարեկները նախկին ճանապարհային տեսուչների նման դարանակալում են, սպասում վարորդ «զոհին», բռնում՝ ու տուգանում: Կարճ ասած՝ քաղաքացին «տուգանքի մատերիալ» է, իսկ ՔՊ-ականները, պաշտոնյաները՝ անձեռնմխելի: Նրանցից շատերի մեքենաները, օրինակ՝ Անդրանիկ Քոչարյանի եւ այլ պատգամավորների, ունեն օպերատիվ համարներ, որոնք պարեկները չեն կանգնեցնում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանն առաջիկա օրերին պատրաստվում է կրկին գնալ սահմանամերձ Տավուշի մարզ: Նկատենք, որ Նիկոլ Փաշինյանը գրեթե ամեն շաբաթ-կիրակի որեւէ մարզ այցելելը «ավանդույթ» է դարձրել ամառային շրջանում: Տավուշի մարզ նրա վերջին այցը հուլիսի 6-ին էր, որի ընթացքում վարչապետը գնացել էր սահմանազատման արդյունքում կիսված Կիրանց գյուղ: Մեր տեղեկություններով՝ առաջիկա օրերին Նիկոլ Փաշինյանը նախատեսում է կրկին գնալ Տավուշ՝ տեղի բնակիչների հետ հանդիպելու: Վարչապետի օրակարգում է նաեւ այցելությունն Արմավիրի մարզ. թե ինչ պլաններ կան Թուրքիայի հետ սահմանակից Արմավիրի մարզի մասով, դեռեւս չի հաղորդվում:

Նիկոլ Փաշինյանը հիմա անում է այն քայլերը, որոնք ընդդիմադիր եղած ժամանակ քննադատում էր եւ ամենամերժելին համարում: Պաշտոնական փաստաթղթերից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2014 թվականից «Հայկական ժամանակ»-ը պատկանում է Փաշինյանի քաղաքացիական զոքանչին: Եթե, օրինակ, Սուրեն Խաչատրյանի գիտությունների դոկտոր լինելը Նիկոլ Փաշինյանը համարում էր զավեշտալի, կամ Գագիկ Խաչատրյանին քննադատում էր, թե բոլոր բարեկամների անուններով բիզնեսներ է գրանցել, ապա պարզվում է, որ ինքն էլ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ն՝ «Հայկական Ժամանակ» թերթը, փաստացի գրանցել է Աննա Հակոբյանի թոշակառու, ապաքաղաքական եւ ընդհանրապես բիզնեսից եւ քաղաքականությունից հեռու մայրիկի անունով: Հեղափոխությունից հետո իրավապահ մարմինները «իրական շահառուների», ««կեղծ» իրական շահառուների» գծով բազում վարույթներ ունեն, սակայն միայն ընդդիմադիրների նկատմամբ: Փաշինյանն ու նրա ընտանիքի անդամների իրական եկամուտներն ու հետաքրքրությունները «վրիպում» են իրավապահների աչքերից:

Կրթական բում խոստացող նախարարությունը չի ընկալում պահի լրջությունը եւ արհեստական Ակադեմիական քաղաքի ծրագիրն է առաջ տանում, որը կլինի քաղաք՝ առանց ուսանողների: «Ժողովուրդ» օրաթերթը Գնահատման եւ թեստավորման կենտրոնի տրամադրած տվյալներից պարզեց, որ հանրապետության տարբեր բուհեր այս տարի դիմել են 14 հազար 332 դիմորդներ: Մինչդեռ, ուսումնական հաստատություններում հատկացված տեղերի քանակը եղել է 16 հազար 38, որից անվճար է եղել 2 հազար 117-ը, վճարովի՝ 13 հազար 921-ը: Այսինքն՝ մեծ թվով թափուր տեղեր են մնացել համալսարաններում՝ ավելի քան 6 հազար 300 վճարովի եւ 271 պետական պատվերով: Եթե կոպիտ հաշվարկ իրականացնենք, ապա կտեսնենք, որ թափուր է մնացել հաստատված վճարովի տեղերի գրեթե կեսը: Այս ցուցանիշը մտահոգիչ պետք է լինի, հատկապես այն դեպքում, երբ նախարարությունը մտադիր է ստեղծել 80 հազար ուսանող ունեցող Ակադեմիական քաղաք: 2020-2022 թվականներին 21 հազար անվճար տեղերից թափուր էր մնում 12-13 հազար տեղ: Կարճ ասած՝ կրթությունը դանդաղ, բայց անկում է ապրում:



ԶՐՈՒՅՑ

ԿԱՄՈՒՐՋՆ ԱՆՕՐԵՆ ՁԵՎՈՎ «ՆՎԻՐԵԼ» ԵՆ ԹՇՆԱՄՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Հայաստան» խմբակցության ղեկավար Արթուր Խաչատրյանի հետ:

-Պարոն Խաչատրյան, հուլիսի 24-ին Դուք եւ Ձեր գործընկեր Գեղամ Մանուկյանը գնացել էիք Կիրանց գյուղ, սակայն, ինչպես Գեղամ Մանուկյանն էր իր ֆեյսբուքյան էջով հայտնել, ձեզ թույլ չէին տվել մուտք գործել գյուղ: Խնդրում ենք՝ մի փոքր մանրամասնեք, թե ով է արգելել մուտքը եւ ինչ պատճառաբանությամբ:

-Ոչ թե արգելել են մուտք գործել, այլ, երբ արդեն գյուղում էինք, սահմանապահ ծառայության մի սպա մոտեցավ, եւ ասաց, որ մենք գտնվում ենք սահմանային գոտում, որտեղ գտնվել, առանց թույլտվության, իրավունք չունենք: Հավանաբար դա նրանց հրահանգել էին, որովհետեւ երբ գնացինք Կիրանցի եկեղեցի, ինչպես եւ միշտ ենք անում գյուղ գնալիս, նրանց ասացին, որ հեռացնեն մեզ:

Մենք եղանք գյուղի դպրոցի մոտ, որտեղից սահմանը 20-25 մետր հեռավորության վրա է ընդամենը: Տնկված ծառեր չկային, ինչպես ասում էր Նիկոլ Փաշինյանը, մի հատվածը բետոնապատ էր, իսկ մյուս հատվածը՝ մետաղապատ: Ես չեմ պատկերացնում՝ այդ «ժեշտը» ինչպես պետք է թշնամուն հետ պահի մեր երկրի վրա հարձակվելուց. ընդհանրապես անտրամաբանական է, թե պատով հնարավոր է կանխել թշնամու հարձակումը:

-Պարոն Խաչատրյան, իսկ հասցրե՞լ եք այդ կարճ ժամանակահատվածում տեղացիների հետ շփվել, հասկանալ՝ինչ մթնոլորտ է իրենց ներսում, ինչ անհանգստություններ ունեն:

-Բնակիչները տխուր էին, եւ դա բնական է, ինչպես կարող էին անհանգիստ չլինել, երբ գիտեն, որ մի քանի մետր հեռավորության վրա թշնամին է: Տեսանք այն հատվածը նաեւ, որը հանձնվել է թուրքին՝առանց որեւէ իրավական հիմնավորման:

-Ո՞ր հատվածի մասին է խոսքը:

-Կիրանց գյուղ մուտք գործելիս ճանապարհը կամրջով է անցնում, այդ կամուրջը Ադրբեջանին է հանձնված: Այնտեղից մի փոքր վերեւ արդեն ադրբեջանցի սահմանապահներն են գտնվում, եւ հանդիպակաց են հայ ու ադրբեջանական դիրքերը:

Իշխանությունը, առանց սահմանագծման ու սահմանազատման, թշնամուն է հանձնել պատմական կամուրջը: Արդարացնելու համար իրենց կապիտուլյացիոն քայլը՝ իշխանությունները հայտարարել են, թե կամուրջը, ճիշտ է, չի տրվել սահմանազատման արդյունքում, սակայն տրվել է սահմանի վերարտադրության արդյունքում: Նման եզրույթ կիրառելն արդեն իսկ անտրամաբանական է, քանզի ո՛չ գիտությանը, ո՛չ մարդկությանն ու բնությանը այն հայտնի չէ:

Ասում էին նաեւ, թե կադաստրային քարտեզները սխալ են եղել, մենք այժմ փորձում ենք հասկանալ այդ խնդիրը, թե երբ է եղել այդ «սխալը», եւ երբ է բացահայտվել:

Արդարադատության նախարարությունը լրատվամիջոցներին պատասխանել էր, թե կադաստրային քարտեզներում սխալ է առկա, այնինչ մեր օրենսդրությունը հստակ մեխանիզմ է նախատեսում, թե կադաստրային քարտեզների սխալն ինչպես է շտկվում, արդյո՞ք այդ գործընթացով են առաջնորդվել թե՞ ոչ, պատասխան չկար:

Պարզ է, որ Ադրբեջանը մատը դրել է քարտեզին ու ասել՝սա պետք է ինձ տաս, իշխանությունն էլ մոգոնել է դա անելու ձեւեր ու որոշել է անունը դնել «սահմանի վերարտադրություն»:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՏԵՍԱԿԵՏ

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՈՒՆԻ ԱԴՐԲԵՋԱՆԸ

Ինչո՞ւ է Ալիեւը պահանջում, որպեսզի լուծարվի ԵԱՀԿ Մինսկի խումբը, փոխվի ՀՀ սահմանադրությունը եւ Հայաստան վերադառնան սովեսական ադրբեջանցիները: Այս մասին իր էջում գրել է ՀՀԿ անդամ Արտակ Զաքարյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «ԵԱՀԿ ՄԽ շարունակում է մնալ միակ պաշտոնական ձեւաչափը, որն իրավասություն ունի ցանկանած պահի անդրադառնալու Արցախյան հիմնահարցին: Այսօր այն սառեցվել է ՌԴ, ԱՄՆ եւ Ֆրանսիայի ունեցած խոր հակադրությունների արդյունքում: Սակայն չի բացառվում, որ օրինակ, Թրամփի վերընտրությամբ, այն վերագործարկվի եւ կրկին ստանձնի իր դերակատարումը: Բացի Ադրբեջանից՝ ո՛չ միջազգային հանրությունը, ո՛չ էլ կողմերից մեկը չի հայտարարել արցախյան հիմնախնդրի լուծված լինելու մասին: ԵԱՀԿ ՄԽ կարող է առնվազն պահանջել եւ ապահովել միջազգային այնպիսի անվտանգային երաշխիքներ եւ այնպիսի իրավաքաղաքական պայմաններ, որի պարագայում հնարավոր լինի ապահովել արցախցիների վերադարձն իրենց հայրենի բնակավայրերը:

Մինսկի խումբը չի կարող լուծարվել առանց պաշտոնական Երեւանի համաձայնության, հետեւաբար՝ Ալիեւի հնչեցրած հերթական պահանջը, Հայաստանի թուլացած ու անկարող վիճակից առավելագույնը քամելու եւ արցախյան հարցը միջազգային մակարդակում վերջնականապես փակելու նպատակ ունի:

Ալիեւը հասկանում է, որ որոշ ժամանակ հետո, հայ ժողովուրդը չի հաշտվելու Բաքվի եւ Նիկոլի համատեղ ծրագրված ռազմաքաղաքական ավանտյուրայի անարդար հետեւանքների հետ: Ուստի պահանջում է նաեւ Հայաստանի սահմանադրության որոշ դրույթների փոփոխություն, որը կզրկի ՀՀ հաջորդ իշխանություններին եւ հայ ժողովրդին՝արցախյան հիմնախնդրին անդրադառնալու, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման ու Հայաստանի անվտանգությունն ամրապնդելու իրավաքաղաքական հիմքերից:

Սովետական ադրբեջանցիների՝ Հայաստան վերադառնալու պահանջով՝ Ալիեւը փորձում է նախապես կանխել կամ, առնվազն, հակակշռել արցախցիների՝ Արցախ վերադառնալու հնարավոր միջազգային պահանջները:

Գլոբալ կոմունիկացիաների բացվելուց հետո՝ տարիներ անց Հայաստանը կարող է լավ դիրքեր ստանալ տարածաշրջանում եւ կրկին գործոն դառնալ: Այն չեզոքացնելու ճանապարհներից մեկն էլ ադրբեջանցիներին կրկին Հայաստան վերադարձնելն է: Նրանց միջոցով թուրք-ադրբեջանական տանդեմը կարող է իրականացնել հստակ մշակված դեմոգրաֆիական քաղաքականություն, տնտեսական ազդեցության լծակների ձեռքբերում, որն էլ ժամանակի ընթացքում կարող է հանգեցնել ՀՀ ներքաղաքական կյանքի վրա զգալի ազդեցության:

Ի տարբերություն մեզ՝ թուրքական քաղաքականությունը հեռատես է եւ երբեք չի դադարում պայքարը հայկական գործոնը Հարավային Կովկասից վերացնելու ուղղությամբ: Այդ քաղաքականությունն ակնառու էր նույնիսկ սովետական տարիներին հայաթափվող Նախիջեւանում, Լեռնային Ղարաբաղում եւ սովետական Ադրբեջանի այլ հայաշատ շրջաններում:

Ալիեւն ամեն կերպ պայքարում է Լեւոն Տեր Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի եւ Սերժ Սարգսյանի ղեկավարած ինքնիշխան եւ զարգացող Հայաստանի Հանրապետության դեմ: Նա ցանկանում է Նիկոլ Փաշինյանի միջոցով եւ նրան օգտագործելով՝ մինչեւ վերջին շապիկը հանել Հայաստանի վրայից եւ մեր ժողովրդին դարձնել թուրքական գործոնից կախյալ շարքային սպառողական հասարակություն՝զուրկ սեփական ինքնությունից ու ազգային նկարագրից»:

ՊԵՍԿՈՎԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ռուսաստանը Հայաստանին համարում է եղբայրական երկիր եւ հույս ունի, որ չեն ընտրի այն ճանապարհը, որը ժամանակին ընտրել էր Կիեւի ռեժիմը: Այս մասին հայտարարել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Հայաստանն ինքնիշխան երկիր է, ինքն է ընտրում փոխգործակցության առաջնահերթ ոլորտները: ՀՀ-ն մեր դաշնակիցն է, եղբայրական երկիր: Պարզապես չէինք ցանկանա, որ փնտրտուքներն իրականացվեն այն ռեժիմով, որը ժամանակին ընտրել էր Կիեւի ռեժիմը»,- ասել է նա՝ պատասխանելով լրագրողների հարցերին:

ՄՈՒՏՔԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ Է

Կիրանց գյուղ մուտքը խիստ սահմանափակված է, անգամ՝ ԱԺ պատգամավորների համար:

Այս մասին գրել է ԱԺ «Հայաստան» խմբակցության անդամ Գեղամ Մանուկյանը:

«Փաստորեն, Տավուշի Կիրանց գյուղ մուտքը խիստ սահմանափակված է, անգամ ԱԺ պատգամավորների համար: Սահմանապահ փոխգնդապետը պարզաբանում է՝ կա սահմանային գոտի եւ շերտ:

Ինչի մասին, ի դեպ, օրերս ինքս էի հարցրել ԱԱԾ փոխտնօրենին ու գրավոր հարցում եմ ուղարկել:

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի այսօրվա նիստում (խմբ.) քննարկվելու են հայ-ադրբեջանական հարաբերությունները, խաղաղության պայմանագիրը: Այս մասին հայտնում է dailysabah.com-ը՝ մանրամասնելով, որ քննարկվելու է Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակը:

Նշվում է, որ սա լինելու է վերջին երկու ամսվա ընթացքում Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի առաջին նիստը, այն կայանալու է Անկարայում: Դրան ներկա են լինելու նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, նրա օգնականները, նախարարները եւ Թուրքիայի զինված ուժերի հրամանատարները:

Քննարկվելու են նաեւ Սիրիայի հետ հարաբերությունների կարգավորումը, Մերձավոր Արեւելքում տիրող ճգնաժամը ու ռուս-ուկրաինական հակամարտությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՉՀԱՆԳԵՑՆՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ուկրաինայի հարցում Գերմանիան ընդունում է որոշումներ, որոնք չեն նպաստում Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի հարաբերությունների սրմանը: Այս մասին հայտարարել է Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցն ամառային ավանդական ասուլիսի ժամանակ, որը հեռարձակվում է Phoenix հեռուստաալիքով:

«Մեր բոլոր որոշումները կշռադատված եւ ընդունված են այնպես, որ Ռուսաստանի Դաշնության եւ Ուկրաինայի միջեւ հակամարտությունը չվերաճի Ռուսաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ պատերազմի»,- ասել է նա:

Գերմանիայի կանցլերը նաեւ ընդգծել է, որ Բեռլինը կշարունակի աջակցել Ուկրաինային, սակայն նշել է, որ չի բացառում Ռուսաստանի մասնակցությունն Ուկրաինայի հարցով հաջորդ համաժողովին:

Հուլիսի 24-ին Շոլցն ասել է, որ Գերմանիայի իշխանությունները Բունդեսվերի զինվորականներին չեն ուղարկի Ուկրաինա:

ԻՎԱՆԻՇՎԻԼԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Եթե իշխող «Վրացական երազանք՝ ժողովրդավարան Վրաստան» կուսակցության հիմնադիր եւ պատվավոր նախագահ Բիձինա Իվանիշվիլին առաջադրվի երկրի նախագահի պաշտոնում, նա կդառնա Վրաստանի պատմության լավագույն նախագահը», - այս մասին լրագրողների հետ զրույցում ասել է Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեն:

ԶԼՄ-ների ներկայացուցիչները նախարարին հարցրել են նախագահի պաշտոնում Իվանիշվիլիի հնարավոր առաջադրման մասին:

«Եթե պարոն Իվանիշվիլին որոշի առաջադրվել նախագահի պաշտոնում, ես վստահ եմ, որ նա կդառնա Վրաստանի պատմության լավագույն նախագահը, թեեւ չգիտեմ, թե ով կլինի նախագահի թեկնածուն»,- ասել է նախարարը եւ ընդգծել, որ իշխող կուսակցությունը պատրաստվում է «տպավորիչ հաղթանակի»:

Խոսելով ընդդիմության մասին՝ Բրեգաձեն նշել է.«Ինչ շանսեր կունենա ընդդիմությունը, իհարկե, կախված է ընտրողներից, բայց, նրանց գործողություններից ելնելով, կարծում եմ, որ նրանց հնարավորությունը նվազագույնի է հասնում: Նրանց առավելագույնը ընտրական շեմը հաղթահարելն է: Ընդհանուր առմամբ, կարծում եմ, որ նրանց համար շատ դժվար կլինի»:

Վրաստանում նախագահական ընտրությունները տեղի կունենան խորհրդարանական ընտրություններից հետո: Նախագահին ընտրելու է ընտրական խորհուրդը, որի կազմում կլինեն խորհրդարանի անդամներ եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

ՑՈՒՅՑԱՆԻՇՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ՝ ԸՆԴԴԵՄ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ներկայացնում է 2024թ. երկրորդ եռամսյակային զեկույցը՝ Հայաստանում խոսքի ազատության վիճակի եւ լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների վերաբերյալ:

2024թ? երկրորդ եռամսյակը հետհեղափոխական Հայաստանում աննախադեպ էր լրատվամիջոցների աշխատակիցների հանդեպ կիրառված ֆիզիկական բռնությունների առումով: Դա պայմանավորված էր Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման գործընթացի հետ կապված հասարակական-քաղաքական մթնոլորտի լարվածությամբ, զանգվածային բողոքի ակցիաներով, ոստիկանության եւ ցուցարարների միջեւ բազմաթիվ բախումներով, որոնց ընթացքում հարձակման էին ենթարկվում նաեւ լրագրողները եւ օպերատորները:

Չնայած, որ վերջին տարիներին ցույցերը, հանրահավաքներն ու երթերը հաճախ ուղեկցվել են նաեւ ԶԼՄ-ների ներկայացուցիչների իրավունքների խախտումներով, սակայն դիտարկվող ժամանակահատվածում դրանք հասել են պիկի: Մասնավորապես, գրանցվել է ընդդեմ լրագրողների եւ օպերատորների 14 ֆիզիկական բռնության դեպք՝ 23 տուժողով. սա 2018 թվականից հետո արձանագրված ամենաբարձր ցուցանիշն է, իսկ տուժողների թվով հավասար է հեղափոխության օրերին գրանցվածին: Ֆիզիկական բռնությունների մեծ մասը՝ 11-ը, ուժային կառույցների անհամաչափ գործողությունների արդյունք է:

Եռամսյակի ընթացքում արձանագրվել է լրագրողների նկատմամբ տարատեսակ այլ ճնշումների՝ վիրավորանքների, սպառնալիքների, մասնագիտական գործունեության խոչընդոտումների 9 դեպք: Սրանցից 6-ը գրանցվել է բողոքի ակցիաների ժամանակ (4-ը ընդդիմության ներկայացուցիչների, 2-ը իրավապահների կողմից):

Դիտարկվող շրջանում ավելացել է ընդդեմ լրագրողների ու լրատվամիջոցների դատական գործերի հոսքը. ապրիլ-հունիս ամիսներին ներկայացվել է այդպիսի 17 նոր հայց՝ նախորդ եռամսյակի 12-ի դիմաց: Դատական հայցերից 5-ը գործարարների կողմից են, 4-ը՝ իշխանության ներկայացուցիչների, 4-ը՝ քաղաքացիների, 2-ը՝ փաստաբանների, 1-ը՝ ՀԿ-ի, 1-ը՝ ընդդիմադիր գործչի կողմից:

Պետական մարմիններից պաշտոնական տեղեկություններ ստանալու եւ տարածելու իրավունքի խախտումների քանակը եռամսյակի ընթացքում նվազել է. ԽԱՊԿ-ը գրանցել է այդպիսի 19 դեպք՝ նախորդ եռամսյակի 41-ի դիմաց: Այստեղ խնդրահարույց են մնում լրագրողների եւ լրատվամիջոցների կողմից հայցվող տեղեկությունների տրամադրման անհիմն մերժումները, ներկայացված գրավոր հարցումներին արձագանքելու չարդարացված ուշացումները կամ լղոզված, հարցերի էության հետ կապ չունեցող պատասխանները:

Միջազգային իրավապաշտպան ու լրագրողական կազմակերպությունները՝ Amnesty International, Freedom House, «Լրագրողներ առանց սահմանների», ինչպես նաեւ ԱՄՆ Պետդեպարտամենտը եռամսյակի ընթացքում անդրադարձել են Հայաստանում լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքների խախտումներին դեպքերին եւ խոսքի ազատության վիճակին ընդհանրապես՝ արձանագրելով, որ երկրում լրատվամիջոցները շարունակում են մնալ բեւեռացված: Ըստ այդ զեկույցների՝ կարեւոր ձեռքբերումներից է ձեւավորված բազմակարծության միջավայրը: Սրանով պայմանավորված՝ մամուլի ազատության վարկանիշում, ըստ «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության գնահատականի՝ Հայաստանը 6 կետով բարելավել է իր դիրքերը. նախորդ տարի 180 երկրի ցանկում ՀՀ-ն 49-րդն էր, այս տարի՝ 43-րդը: Սակայն կազմակերպությունը նշել է, որ երկրում ոլորտը կարգավորող իրավական դաշտը բավարար չափով չի պաշտպանում մամուլի ազատությունը եւ չի հետեւում եվրոպական չափանիշներին:

Այս առումով առավել հրատապ են ԽԱՊԿ-ի եւ գործընկեր լրագրողական կազմակերպությունների, ԱԺ պրոֆիլային հանձնաժողովի եւ արդարադատության նախարարության կողմից տարվող համատեղ աշխատանքները՝ Մեդիա օրենսդրության բարեփոխումների հայեցակարգի մշակման ուղղությամբ: Այդ գործընթացի տրամաբանությունից է բխում նաեւ «Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նախագիծը, որը ապրիլին ներկայացվել է ՀՀ կառավարություն: Ավելի ուշ՝ ապրիլի 29-ին, այդ օրինագծի քննարկման համար կայացել են նաեւ խորհրդարանական լսումներ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

«Բայդենի՝ մրցապայքարից դուրս գալը նշանակում է, որ հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական գործընթացները «անտեր» մնացին»: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է միջազգայնագետ Սուրեն Սարգսյանը:

«Չգիտեմ ինչու պետք է Ադրբեջանը հիմա համաձայնի խաղաղության համաձայնագիր կնքել Հայաստանի հետ մի վարչակազմի միջնորդությամբ/ճնշմամբ, որին մի քանի ամսվա կյանք է մնացել: Մանավանդ, որ ո՛չ Հարրիսի, ո՛չ էլ Թրամփի վարչակազմի համար այս հարցն առանցքային չի լինելու եւ Բաքուն հանգիստ կարող է սպասել:

Նույնը վերաբերում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, որում Բայդենի վարչակազմը հետաքրքրված էր:

Այսպես կոչված «խաղաղության համաձայնագիրը» մինչեւ նոյեմբեր կնքելու միտքը, եթե նույնիսկ Վաշինգտոնինը չէր, ապա Բայդենի վարչակազմի շահերից էր բխում:

Հիմա այս հարցերը «անտեր» են մնացել, քանի որ Բայդենի ճնշումներից վախեցող չկա, իսկ Հայաստանի՝բոլոր ձվերը մի զամբյուղում դնելու քաղաքականությունը հերթական աղետն է», - գրել է նա:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հուլիսի 18-ին Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ էր նշանակվել Սուրեն Վարոսյանը:

Իսկ ո՞վ է նա. Վարոսյանը մինչեւ թաղապետարանում հայտնվելն աշխատել է մի շարք պատկան հաստատություններում՝ պարբերաբար ստանձնելով տարբեր հաստիքներ: Օրինակ՝ 2014-2018 թվականներին աշխատել է ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի տեղեկատվության եւ հեռահաղորդակցության վարչությունում՝ որպես առաջին կարգի մասնագետ:

2018-2020 թվականին աշխատել է ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության պաշտոնական այցերի բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ:

2020-2021 թվականներին եղել է ՀՀ փոխվարչապետի արարողակարգի պատասխանատուն, 2021-2024՝ ՀՀ վարչապետի արարողակարգի պատասխանատուն, 2024-2024՝ ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայության պետի տեղակալը:

Բանն այն է, որ վարչապետի՝հունվարի 30-ին կայացրած որոշման համաձայն Սուրեն Վարոսյանն ազատվել է վարչապետի արարողակարգի պատասխանատուի պաշտոնից:

Հունվարին ազատվել է պաշտոնից, սակայն պաշտոնատար անձի պաշտոնը դադարեցնելու մասին հայտարարագիր չի ներկայացրել Սուրեն Վարոսյանը:

Այնինչ, 2023 թվականի մայիսի 24-ին Սուրեն Վարոսյանը ներկայացրել է պաշտոնատար անձի՝ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագիր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ՊԱՐՔՎԵԼ ԵՆ

ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿՉՈՒՀՈՒ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԸ

Պարզվել են Գյումրի քաղաքի բնակիչ Վարդուհի Հակոբյանի սպանության դեպքի մի շարք էական հանգամանքներ, այդ թվում՝ ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը, ինչպես նաեւ շարժառիթը:

Ավելի վաղ տեղեկացրել ենք, որ 2024թ. հուլիսի 21-ին քաղաքացուց հաղորդում էր ստացվել այն մասին, որ երկար ժամանակ քրոջից՝ Գյումրի քաղաքի Ջափարիձե փողոցի տներից մեկում ապրող Վարդուհի Հակոբյանից, տեղեկություն չունենալով, վերադարձել է, տան դուռը կոտրելով՝ ներս է մտել եւ տանը հայտնաբերել քրոջ դին:

Դեպքի վայրի զննությամբ նշված տան հյուրասենյակի հատակին հայտնաբերվել էր սավանով ծածկված նեխած դի՝ գլխից մինչեւ գոտկատեղը ճամպրուկի մեջ դիրքում: Ըստ դատաբժիշկ-փորձագետի հայտարարության՝ այն մի քանի ամսվա մահվան վաղեմություն ունի:

2024թ. հուլիսի 22-ին սպանությունը կատարելու կասկածանքով ձերբակալվել էր Գյումրի քաղաքում հաշվառված, սակայն Կոտայքի մարզում բնակվող 49-ամյա մի տղամարդ, ով մինչեւ դեպքը, մի քանի ամիս տուժողի հետ բնակվել են վերջինիս՝ Գյումրի քաղաքում գտնվող նշված տանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների, ոստիկանության ծառայողների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Գյումրի քաղաքի 49-ամյա բնակիչը, Վարդուհի Հակոբյանի հետ գտնվելով փաստական ամուսնական հարաբերությունների մեջ, 2023 թվականի ապրիլ-մայիս ամիսներին, քննությամբ դեռեւս չպարզված օրը, վերոնշյալ հասցեի տան հյուրասենյակում, իր երեխաների մասին կնոջ արած արտահայտությունների պատճառով առաջացած վիճաբանության ժամանակ, ձեռքերով մի քանի անգամ հարվածներ է հասցրել հյուրասենյակի բազմոցին նստած կնոջ գլխին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի վնասվածքներ: Այնուհետեւ, տեղափոխելու նպատակով, վերջինիս դին բազմոցից իջեցրել է հատակին, մարմինը կիսով չափ՝ գլխից մինչեւ գոտկատեղը, տեղավորել ճամպրուկի մեջ, սակայն, չկարողանալով շարունակել եւ այդ կերպ տեղափոխել այն, դին ծածկել է վերմակով, վերցրել կնոջ բջջային հեռախոսը, տան բանալիները, փակել տան դուռը, կողպել բակի դարպասները եւ հեռացել:

Դրանից հետո ինչպես կնոջ, այնպես էլ այլ հեռախոսահամարներով 49-ամյա տղամարդը «sms» հաղորդագրություններ է գրել վերջինիս քրոջը, որպեսզի չկասկածեն, որ կինը մահացել է:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 49-ամյա տղամարդը հաշվառված է Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում: Որոշում է կայացվել Գյումրի համայնքի խնամակալության եւ հոգեբարձության հանձնաժողովի նախագահին նրա օրինական ներկայացուցիչ ճանաչելու մասին:

Քրեական վարույթի շրջանակներում կատարված՝ տղամարդու անձնական խուզարկությամբ վերջինիս տաբատի գրպանից հայտնաբերվել է երկու զույգ բանալի, որոնք, պարզվել է՝ Վարդուհի Հակոբյանի տան մուտքի դռան եւ դարպասի բանալիներն են:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 49-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով (սպանությունը՝ կատարված մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից):

Միջնորդություն է ներկայացվել դատարան նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐ

ՁՈՐԱԿՈՉԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Ինչո՞ւ ՀՀ կառավարությունը երկարաձգեց 2024 թվականի ամառային զորակոչը: Բան այն է, որ իրավապահ համակարգը եւ այլ կառույցներ չեն կարողանում հիմնավորել անձանց առողջական խնդիրներ ունենալու կամ չունենալու հարցը, ինչի արդյունքում էլ որոշել են զորակոչը երկարաձգել:

Օրինակ, հայտնել էինք, որ «օրենքով գող» օշականցի Գեւորիկի որդին՝ Սարգիս Մելիքյանը, հրաժարվում է փորձաքննության ենթարկվել: Իրավապահ մարմինները գրեթե բոլոր իրավական գործընթացներով փորձում են հասնել այն հարցին, որ «օրենքով գող»-ի տղան կեղծիքների արդյունքում է ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն, օրենքով գող օշականցի Գեւորիկի որդին այս պահին ազատության մեջ է, սակայն նրա՝ բանակից ազատման հիմքերը ստուգելու հարցում լուրջ գործընթաց է մեկնարկել:

2024 թվականի հունվարի 31-ին, ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արագածոտնի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, թե որտեղ է գտնվում Օշական գյուղի բնակիչ 21-ամյա Սարգիս Մելիքյանը:

Shamshyan.com-ը հայտնել էր, որ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության ծառայողները եւ նրանց միացած մյուս իրավապահները Օշականում հայտնաբերել են Ս. Մելիքյանին եւ բերման ենթարկել ոստիկանության Աշտարակի բաժին:

Սկզբնաղբյուրի տեղեկություններով՝ վերջինիս նկատմամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2023 թվականի հունիսին որոշում է կայացրել որպես խափանման միջոց կալանավորումը: Նրա նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով (զինվորական ծառայությունից խուսափելը):

Հավելենք նաեւ, որ պաշտոնապես կառավարությունը հայտնել էր, որ 2024 թվականի ամառային զորակոչի անցկացման ժամկետը երկարաձգել է մինչեւ օգոստոսի 15-ը ներառյալ:

Որոշման նախագիծը ներառված է կառավարության հուլիսի 25-ի նիստի չզեկուցվող հարցերի փաթեթում:

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է հայտարարված՝ 2024 թվականի ամառային զորակոչի շրջանակներում զորակոչի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտման գործընթացն ավարտին հասցնելու եւ դրանց արդյունքներով քաղաքացիների զորակոչի կարգավիճակը հստակեցնելու նպատակով զորակոչի անցկացման ժամկետը երկարաձգելու անհրաժեշտությամբ:

ՔՐԵԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ Մ. ՄԱԽՍՈՒԴՅԱՆԻՆ ԵՎ ՆՐԱ ԵՂԲՈՐԸ

«Տավուշը հանուն հայրենիքի» շարժման անդամ Միհրան Մախսուդյանին եւ նրա եղբորը ձերբակալել են: Այս մասին հայտնում է «Ազգային ճակատը»:

Իրավապահները խուզարկել են պահեստազորի գնդապետ, Միհրան Մախսուդյանի եղբոր՝ Եղիշե Մախսուդյանի՝ Ոսկեպարում գտնվող տունը եւ ձերբակալել Մախսուդյան եղբայրներին:

ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ԱԶԱՏՎԵԼ Է ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԻՑ

Արցախի Հանրապետության Մարտակերտի քաղաքապետ Միշա Գյուրջյանն ազատվեց տնային կալանքից: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է փաստաբան Արսեն Բաբայանը:

«Հուսամ՝ քննչական կոմիտեն շուտով կիրաժարվի քրեական հետապնդումից»,- գրել է նա:

Հիշեցնենք, որ Գյուրջյանը ձերբակալվել էր 2024 թվականի մայիսի 25-ին, ինչից հետո դատարանի որոշմամբ՝ երկու ամսով կալանավորվել: Հունիսի 27-ին, սակայն, նրա կալանքը փոխարինվել էր տնային կալանքով:

Նշենք, որ Գյուրջյանը մեղադրվում է խարդախությամբ խոշոր չափերով հափշտակության եւ փաստաթղթեր կեղծելու համար: Ըստ ՔԿ-ի՝ նա խմբի հետ փաստաթուղթ է կեղծել եւ կատարել խոշոր չափերով գույքի հափշտակություն՝ 1.935.000 դրամ արժողությամբ «CHEVROLET LACETTI-1.4»:

Նրան մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով (խարդախություն) եւ 457-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը):

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ասկերանի քաղաքապետի Հայկ Շամիրյանի նկատմամբ որպես խափանման է միջոց կիրառվել վարչական հսկողությունը: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում հայտնել է փաստաբան Վահե Եփրիկյանը:

«Դատարանը, նախագահությամբ Ռ. Մարիկյանի, ՀՀ քրեական օրենսգրքի 46-236-րդ հոդվածի 2-րդ մասով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով եւ 457-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվող Ասկերանի քաղաքապետ Հայկ Շամիրյանի նկատմամբ ընտրված տնային կալանքը երկարացնելու մասին քննիչի միջնորդությունը քննության առնելով՝ որոշեց այն մասնակի բավարարել՝ որպես խափանման միջոց կիրառելով վարչական հսկողությունը», - գրել է փաստաբանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 24-ից հուլիսի 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 84 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ՝ «ՀԻՄՆԱՏԱՎՈՒՇ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ

2010թ. մայիսի 22-ին Իջեւանում Ֆրանսիայի Օ-Դը-Սենի գլխավոր խորհրդի նախագահ Պատրիկ Դեւեջյանը եւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը ստորագրել են համատեղ նկատառումների հուշագիր: 2011թ. մարտին Ֆրանսիայում կողմերը ստորագրել են Օ-Դը-Սենի գլխավոր խորհրդի եւ Տավուշի մարզի միջեւ ապակենտրոնացված համագործակցության շրջանակային պայմանագիր. հետագայում համագործակցության նոր համաձայնագրեր են կնքվել: «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամը ստեղծվել է Ֆրանսիայի հայկական հիմնադրամի կողմից: Օ-Դը-Սենի գլխավոր խորհրդի դեպարտամենտի աջակցությունն ուղղված է Տավուշի մարզի գյուղատնտեսության զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, Տավուշի սահմանագոտու բնակիչների կենսամակարդակի բարելավմանը: «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամի գործունեությունը համակված է մեծ կոռուպցիայով, գումարների մսխումով: Նախկինում գրել ենք «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի՝ Լուսաձորի անասնաֆերմայում 19 ցեղական կովերի սատկելու, 2016թ. հուլիսին Լուսաձորի պանրագործարանի արտադրանք 3.5 տոննա պանիրը ոչնչացնելու՝ հորելու եւ այլնի մասին: Հիմնադրամում իշխում են «կոռուպցիոն բարեկամական» կապերը: Սուրեն Գեւորգյանը, լինելով Ֆրանսիայի հայկական հիմնադրամի տնօրեն, նաեւ «ՀիմնաՏավուշ» տնօրենն է, նրա կինը՝ Հասմիկը, Լուսաձորի պանրագործարանի արտադրանքն իրացնող «ԷկոՏավուշի» տնօրենը, վերջինիս հորեղբոր որդին՝ Տիգրան Տոնոյանը՝ «ՀիմնաՏավուշի» փոխտնօրենն է: Տիգրան Տոնոյանը նախկինում Երեւանի քաղաքապետարանում վարորդ է աշխատել, Հասմիկը, կամ ինչպես նրան կոչում են՝ Նանա Գեւորգյանը, երաժշտության մասնագետ է, նա ինչպե՞ս կարող է գյուղատնտեսական մթերքների արտադրության եւ իրացման բիզնեսն արդյունավետ ղեկավարել: Իրենց ենթակայությամբ Լուսաձորում գյուղատնտես աշխատող Կարինեն մասնագիտությամբ կապ չունի գյուղատնտեսության հետ, սակայն գյուղատնտեսի հաստիք է զբաղեցնում, նրա համար հիմնադրամը բնակարանի վարձի մեծ գումար է մուծում: «ՀիմնաՏավուշ»-ում տիրող բարքերի, աշխատողների հետ վատ վերաբերմունքի մասին նախկինում հրապարակումներ եմ ունեցել (խմբ.): «ՀիմնաՏավուշ» զարգացման հիմնադրամից մեր աղբյուրները հայտնում են, որ պարբերաբար անցկացվող աուդիտները կեղծ տվյալներ են ներկայացնում, մինչդեռ հիմնադրամը անտրամաբանական մեծ գումարներ է ծախսում, մսխում՝ տնկիներ գնելու համար: 2013թվականին Իջեւանի տարածաշրջանի Դիտավան գյուղի նախկին գյուղապետ Սեյրան Սարգսյանը եւ Դիտավանի 3 այլ բնակիչներ դատի են տվել հիմնադրամին: Դիտավանցիների հայցը վերաբերում է 2012թ. Դիտավանում ցանված 10 հա եգիպտացորենին, որից ստացված սիլոսը պետք է օգտագործվեր հիմնադրամի կողմից՝ մարզի Լուսաձոր գյուղում հիմնված տոհմային անասնապահական ֆերմայի կովերին կերակրելու համար: Ըստ պայմանագրի՝ «ՀիմնաՏավուշը» հնձի շրջանում պետք է ապահովեր տեխնիկայով, ինչը չի արել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

ՏԱՐԻՔԱՅԻՆ ՇԵՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Երեկ կառավարության որոշմամբ ընդայնվել է անվճար եւ արտոնյալ պայմաններով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության եւ սպասարկման իրավունք ունեցող շահառուների շրջանակը, հայտնում են ՀՀ առողջապահության նախարարությունից:

«Հայաստանի Հանրապետության վարչապետի մոտ կայացած խորհրդակցության (2023թ. դեկտեմբերի 18) ընթացքում տրված հանձնարարականի համաձայն՝ փոփոխությունը պայմանավորված է անպտղության հաղթահարման ծրագրի ընդլայնման եւ շահառուների նոր խմբեր ներառելու անհրաժեշտությամբ:

Ծրագրի ընդլայնման արդյունքում ծառայություններից կօգտվեն՝

ՀՀ քաղաքացի կամ ԼՂ-ից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված՝ 2 տարի եւ ավելի անպտղության ախտորոշում ունեցող անզավակ կանայք, որոնց տրամադրվում է ծառայությունների ամբողջական փաթեթ, նախկին կարգավորմամբ սահմանված տարիքային վերին շեմ 36-ի փոխարեն սահմանվել է մինչեւ 40 տարեկանը ներառյալ:

1 երեխա ունեցող՝ երկրորդային անպտղության ախտորոշում ունեցող՝ նախկին կարգավորմամբ սահմանված սահմանամերձ բնակավայրերի բնակիչների փոխարեն, ներարգանդային սերմնավորման փորձերի եւ արտամարմնային բեղմնավորման 1 փորձի հնարավորություն է տրամադրվում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ ԼՂ-ից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված բոլոր զույգերին, որոնցից կինը պատկանում է 20-36 (ներառյալ) տարիքային խմբին:

28-42 (ներառյալ) տարեկան Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, ժամանակավոր պաշտպանության տակ վերցված, փախստական ճանաչված անզավակ կանայք:

Կանոնակարգվել է նաեւ նախկինում շահառու չհանդիսացող, սակայն ծրագրի ընդլայնման արդյունքում շահառու դարձած անձանց՝ ծառայությունների քանակից օգտվելու իրավունքը, ինչպես նաեւ պետական պատվերի շրջանակներում սառեցման ենթակա սաղմերի քանակը եւ պահպանման ժամկետը»,-ասված է հաղորդագրության մեջ:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՆԻՆԵՐ» ՀԿ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Օրերս «ArLeAM» ընկերության ներկայացուցիչները հյուրընկալել են «Հայաստանի գինիներ» ՀԿ անդամներին: Գինեգործների համայնքի 29 ներկայացուցիչներ շրջել են ընկերության ինտենսիվ այգիներում, ծանոթացել ընկերության աշխատանքներին եւ համտեսել «Door» բրենդի պրեմիում գինիները: Հանդիպման օրակարգի շրջանակում քննարկվել են ոլորտի մի շարք հիմնախնդիրներ՝ խաղողի այգիների խնամքը, կառավարման, պահպանման մեթոդները, գինու որակի բարելավումը եւ օրգանական գինու մշակումը:

«Գինեգործության ոլորտի համար կենսական նշանակություն ունի մեր տեղական արտադրանքի վարկանիշի, ճանաչելիության եւ մրցունակության բարձրացումը, որը հնարավորություն կտա ներկայացվածություն ապահովելու նոր շուկաներում», - ասել է «ArLeAM» եւ «Door» բրենդները ներկայացնող ընկերության տնօրեն Լեւոն Խաչատրյանը:

«ArLeAM»-ը նորարարական ապրանքանիշ է, այն առաջարկում է առանց հավելանյութերի, բնական, ինքնուրույն աճեցված արտադրանք, որոնց կողքին իր ուրույն տեղն է զբաղեցնում «Door» գինու ապրանքանիշը: 2022 թվականից ընկերությունն անդամակցում է «Հայաստանի գինիներ» ՀԿ-ին, որի ջանքերով հայկական գինիները առաջ են մղվում հովանոցային՝ «Wines of Armenia» ապրանքանիշի ներքո՝ տեղի եւ միջազգային ամենատարբեր հարթակներում:

ԸՆԹԱՆՈՒՄ Է 10–ՐԴ «ԱՐՄԱԹ» ՏԵԽՆՈՃԱՄԲԱՐԸ

Հուլիսի 19-28-ը Դիլիջանի Մոնթե Մելքոնյանի անվան վարժարանում անցկացվում է «Արմաթ» ամառային տեխնոլոգիական ճամբարը՝ նախատեսված 10-14 տարեկան պատանիների համար: Հայաստանի բոլոր մարզերից մասնակիցները կմիավորվեն կրթության, ժամանցի, սպորտի, մշակույթի եւ հայրենաճանաչողական արշավների շուրջ՝ ստանալու հիմնարար գիտելիք, գործնական հմտություններ ու թիմում աշխատելու փորձ: Սա հետագայում նրանց հնարավորություն կընձեռի առավել համարձակ շարունակելու իրենց դասընթացները, հետագայում առավել ճկուն կողմնորոշվելու մասնագիտական ընտրության հարցում:

Ճամբարին մասնակցելու են նոր «Արմաթներ» հաճախող եւ նույնիսկ «Արմաթ» չհաճախող պատանիները: Նպատակն է՝ խտացված օրակարգով՝ մասնակիցներին հիմնովի պատկերացում տալու ճարտարագիտական աշխարհի մասին, համայնքի մաս դարձնել նրանց, որն էլ իր հերթին նրանց հետագա ուսումնառությունն ավելի արդյունավետ կդարձնի:

Այս 9 օրերի ընթացքում տեխնոճամբարը խթանում է պատանիների թիմային մտածելակերպը, բացահայտում նրանց ուժեղ եւ թույլ կողմերը, սովորեցնում հետադարձ կապի հմտությունը եւ արդյունքակենտրոն աշխատանքը:

Ճամբարում երեխաների առօրյան հագեցած է՝ ռոբոտաշինության մրցույթին նախապատրաստություն, ողջ մնալու արվեստի վարժանքներ, առաջին բուժօգնության դասընթաց, լողի ու ֆուտբոլի առաջնություն ջոկատների միջեւ, ինտելեկտուալ ու ժամանցային խաղեր, քայլարշավ եւ այլն:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն եւ մրցանակաբաշխությունը տեղի կունենա հուլիսի 27-ին՝ ժամը 14:30-ին:

Այս տարի «Արմաթ» տեխնոճամբարի իրականացման աջակիցներն են ԿԳՄՍ նախարարությունը, VMware, Adobe, ZCMC, «Մասիս» եւ «Մոսկվայի Տուն» ընկերությունները:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 1 մարդ զոհվել է, 16-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

200 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՉԱՓՈՎ ՆՈՐ ՎԱՐԿ

Այսօր (խմբ.) կայանալիք կառավարության հերթական նիստում կընդունվի Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին նախագիծը:

Այն չզեկուցվող հարցերի շարքում է:

«Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ Հայաստանի Հանրապետության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից «Քաջարանի թունելի շինարարություն» ծրագրի ֆինանսավորման համար ներդրումային վարկի տրամադրման մասին» համաձայնագրի նախագծով նախատեսվում է Կայունացման եւ զարգացման Եվրասիական հիմնադրամի միջոցներից Հայաստանի Հանրապետությանը, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, տրամադրել 200 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ՝ Քաջարանի թունելի շինարարության եւ M2 ճանապարհի մի հատվածի վերակառուցման ինժեներաշինարարական աշխատանքների իրականացման համար:

ՀԵՐԹԱԿԱՆ ՏՀԱՃ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐԸ

«Վայլդբերիզ» (Wildberries) օնլայն առեւտրի հարթակը շարունակում է զարմացնել իր գնորդներին, սակայն ինչպես լավ առումով, այնպես էլ՝ վատ:

Բանն այն է, որ օնլայն առեւտրի հարթակից օգտվողները վերջին շրջանում նկատում են, որ գնված իրերի գումարն ավելին է, քան պետք է լիներ:

Ամբողջ խնդիրն այն է, որ, օրինակ, 5000 դրամով գնված ապրանքը, որի առաքումը դեպի Հայաստան անվճար է, արդեն տեղ հասնելուն պես դառնում է 6300 դրամ:

Նշենք, որ այս օրինակն օնլայն գնումների հարթակի առաջին տհաճ անակնկալը չէ, ինչը զարմանք է առաջացնում առեւտրի հարթակից օգտվողների համար:

13.3 ՄԼՐԴ ԴՐԱՄԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Կառավարության երեկվա՝ հուլիսի 25-ի նիստում գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատվեց «ԱՐՄԵՆԻԱՆ ՏՈԲԱԿՈ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին:

Այս ընկերության կողմից ներմուծվող հումքը նախատեսվում է օգտագործել ծխախոտի արտադրության համար: Արտադրությունն իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզում:

Ընկերությունը հիմնադրվել է 2024 թվականին:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել շուրջ 13.3 մլրդ դրամի կապիտալ ներդրում եւ 38.6 մլրդ դրամի ներդրում հումքի ձեռքբերման համար: Մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 3.6 մլրդ դրամ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

DataLex-Ի ԱԿՏԵՐԸ ԿՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ court.am-ՈՒՄ

Դատական դեպարտամենտը հարկ է համարում տեղեկացնել, որ. «Մարիլի վերջից սկսած «Դատալեքս» համակարգում եւ դատական իշխանության ամբողջ փաստաթղթաշրջանառությունն ապահովող թվային ծրագրում ի հայտ են եկել տեխնիկական խնդիրներ, որի արդյունքում դատական ակտերի հրապարակայնացումը եւ «Դատալեքս» համակարգում տվյալների ներբեռնումն ու թարմացումը պարբերաբար հնարավոր չէր լինում կատարել:

Դատական դեպարտամենտը եւ համակարգը սպասարկող «Մեյսիս» ընկերությունը փորձել են իրենց հնարավորությունների սահմաններում խնդրին ժամանակավոր լուծում տալ, եւ, հաշվի առնելով, որ ինչպես «Դատալեքսը», այնպես էլ ծրագիրը ավելի քան 15 տարվա վաղեմություն ունեն եւ նոր տեխնոլոգիաներով վերազինման անհրաժեշտությունն օրհասական է, սույն թվականի մայիսին խնդրի մասին տեղեկացվել է տեղեկատվական համակարգերի կառավարման խորհուրդը՝ հարցը քննարկելու եւ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության տնօրեն Ներսես Երիցյանի աջակցությամբ լուծումներ գտնելու համար:

Մինչ տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի կողմից վերոնշյալ խնդրի վերաբերյալ վերջնական եւ համապարփակ որոշման կայացումը՝ սույն թվականի հունիսի 28-ին դատական դեպարտամենտի շենքում տեղի ունեցավ վթար՝ ջրի արտահոսք, որի արդյունքում վնասվեցին համակարգերը սպասարկող սերվերները: Վթարից սերվերների նման վնասումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դեռեւս 2017-2018 թվականներին սերվերային տարածքի նախագծումը եւ կառուցումը իրականացվել է թերացումներով, առնվազն՝ առանց անվտանգային լիարժեք կահավորման, եւ պատշաճ հաշվի առնված չէր կոյուղաջրի ջրագծերի տեղադրման մանրամասն սխեման:

Դատական դեպարտամենտն արդեն իսկ միջոցներ է ձեռնարկել եւ սերվերային հանգույցի սենյակն ապահովվել է անհրաժեշտ անվտանգային կահավորմամբ: Երեկ դեպարտամենտի եւ «Մեյսիս» սպասարկող ընկերության ջանքերի արդյունքում հնարավոր է եղել վերականգնել համակարգերի «գործունակությունը», այդ թվում՝ մասնակի վերականգնվել է դատական գործերի բաշխման էլեկտրոնային ավտոմատացված համակարգը, սակայն մինչ օրս՝ չեն վերականգնվել 3 դատարանների՝ Սնանկության դատարանի, Արագածոտնի դատարանի, Վերաքննիչ վարչական դատարանի տվյալների բազան, առկա է դատական գործերի էլեկտրոնային քարտերում տեղեկությունների մուտքագրման անհնարինություն, խափանված է դատարանների միջեւ դատական գործերի էլեկտրոնային քարտերի տեղեկատվության փոխանցման եւ ստացման ծրագիրը, խափանված է բոլոր դատարանների ծրագրերի սերվերներից ինֆորմացիայի՝ դեպի դատական դեպարտամենտի տվյալների կենտրոն տեղափոխման տրանսպորտային համակարգը, ինչի արդյունքում չի թարմացվում նաեւ «Դատալեքսը»:

Վթարի, ձեռնարկված միջոցների, ինչպես նաեւ ստեղծված իրավիճակի մասին կրկին տեղեկացվել է Խորհուրդը եւ Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության տնօրեն Ներսես Երիցյանը՝ խնդրելով գտնել լուծումներ դատական իշխանության ամբողջ փաստաթղթաշրջանառությունն ապահովող թվային ծրագրի, «Դատալեքս» տեղեկատվական համակարգի եւ գործող համակարգերի կապուղիները վերազինելու, ամբողջությամբ թարմացնելու եւ համակարգերի հնությամբ պայմանավորված պարբերաբար առաջացող խնդիրները վերջնականապես լուծելու համար:

Տեղեկատվական խորհրդում գործակալությունը ներկայացրել է խնդրի լուծման իր տեսլականը եւ հավաստիացրել, որ երկու ամսվա ընթացքում ժամանակակից տեխնոլոգիաների եւ անվտանգային բարձր երաշխիքների կիրառմամբ հնարավոր կլինի ամբողջությամբ լուծել առկա խնդիրները, ինչպես նաեւ դատական համակարգը զերծ պահել հետագա նմանատիպ իրավիճակների առաջացումից:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ խնդրի ժամանակավոր լուծման նպատակով եզրափակիչ դատական ակտերը հրապարակվում են Դատական իշխանության պաշտոնական կայքում՝ court.am-ում»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ Գ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Գագիկ Անդրիկյանին եւ Արմինե Գասպարյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 23 շենք, 1 հասցեում գտնվող 398,8 քմ բնակելի տուն եւ 0,02685 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 71500000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.08.2024թ.-ին, ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլտեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am , www.borsa.am կայքերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

«ՀԱՅՖԻԼՄԻ» ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է Հայաստանի կինոյի հիմնադրամի, որի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Դավիթ Բանուչյանը:

Այդ առիթով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանն այցելել են Հայաստանի կինոյի հիմնադրամ, որտեղ անձնակազմին է ներկայացվել կառույցի նոր ղեկավարը:

Նախարարը Դավիթ Բանուչյանի ուղեկցությամբ շրջայց է կատարել հիմնադրամում, զրուցել աշխատանքային թիմի հետ, ծանոթացել կառույցի առաջիկա ծրագրերին եւ անելիքներին:

Ժաննա Անդրեասյանը շնորհակալություն է հայտնել անձնակազմին եւ Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախկին տնօրեն Շուշանիկ Միրզախանյանին՝ այս տարիներին կատարած աշխատանքի համար:

Շնորհավորելով նորանշանակ տնօրեն Դավիթ Բանուչյանին կառույցի ղեկավարումը ստանձնելու կապակցությամբ՝ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ 100-ամյա ավանդույթներ եւ փորձառություն ունեցող «Հայֆիլմի» իրավահաջորդ հանդիսացող հիմնադրամի ղեկավարումը լուրջ հանձնառություն ու պատասխանատվություն է. «Վստահ եմ, որ հիմնադրամի թիմի հետ համատեղ այս աշխատանքը մեծ հաջողությամբ կշարունակեք եւ կգրանցեք նոր արդյունքներ:

Իրականում կինոյի ոլորտից մեր ակնկալիքները շատ մեծ են, եւ վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունները զարգացման նոր հեռանկարներ են բացում: Ներկայում գտնվում ենք շատ կարեւոր փուլում. այս պահին մի քանի ենթաօրենսդրական ակտեր են շրջանառվում, որոնք ընդունվելու դեպքում էապես մեծացնելու են իրականացվող աշխատանքի ծավալն ու գործառույթը: Այդ իմաստով, իհարկե, հիմնադրամը կարիք է ունենալու որոշակի վերագնահատման եւ գործառույթների վերապլանավորման՝ թիրախային արդյունքներ գրանցելու եւ առավել արդյունավետ աշխատելու տեսանկյունից: Ըստ էության՝ մենք ուզում ենք, որ Հայաստանում կինոարտադրության զարգացման պոտենցիալն ամբողջությամբ իրացվի, քանի որ ունենք հսկայական ժառանգություն եւ մեծ ներուժ կինոարտադրության խթանման համար: Այստեղ մեր ամենակարեւոր անելիքը աջակցությունն է ոլորտին, ժառանգության պահպանումն ու հանրահռչակումը»:

Նախարարի խոսքով՝ քննարկվում են նաեւ ոլորտի հնարավորությունների էական բարելավման հարցերը.

«Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի տեսլականում առանձին մաս է կազմում նաեւ «Հայֆիլմի» տարածքը, որը պլանավորվում է զարգացնել՝ որպես կինոարտադրության տարածք: Կարեւորում եմ հիմնադրամի ներգրավվածությունն այս քննարկումներում, որպեսզի հասկանանք, թե ինչպես կարող ենք այդ տարածքում եղած ավանդույթները, հնարավորությունները եւ փորձառությունը զարգացնելով ու վերափոխելով՝ ստանալ ժամանակակից կինոարտադրության լավագույն պայմանները: Այստեղ, իհարկե, կունենանք շատ լավ հնարավորություն կինոկրթությունը կապել կինոարտադրության շրջափուլին՝ դրանով նաեւ ունենալով կինոկրթության որակի էական բարձրացում»:

Այս բոլոր աշխատանքներում հիմնադրամի դերը նախարարը համարել է առանցքային՝ շեշտելով, որ դրա առաջնորդությունը եւ նախաձեռնողականությունը վճռորոշ են լինելու առաջընթացի գրանցման ճանապարհին: Ժաննա Անդրեասյանը հաջողություններ է մաղթել հիմնադրամի նորանշանակ տնօրենին եւ ողջ անձնակազմին:

Հիմնադրամի նորանշանակ ղեկավար Դավիթ Բանուչյանն իր հերթին շնորհակալություն է հայտնել նախարարին վստահության եւ ընձեռված հնարավորության համար՝ նշելով, որ մեծ պատիվ է ստանձնել Հայաստանի կինոյի հիմնադրամի կառավարումը, որը հանդիսանում է իրավահաջորդը հարյուրամյա կինոժառանգություն եւ ավանդույթներ ունեցող պատմական «Հայֆիլմի»:

Նախարարը շնորհավորել է նաեւ ռեժիսոր Ջառա Ջյանին եւ ողջ անձնակազմին՝ Սերգեյ Փարաջանովին նվիրված «Ես վրեժխնդիր կլինեմ աշխարհից սիրո միջոցով» ֆիլմը Վենետիկի կինոփառատոնի մրցութային ծրագրում ընդգրկվելու կապակցությամբ:

Ժաննա Անդրեասյանը հավաստիացրել է, որ նախարարությունը շարունակելու է աջակցել ոլորտի առաջընթացին եւ զարգացմանն ուղղված բոլոր ծրագրերին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆԸ՝ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտի ուսանող Գեւորգ Բեգլարյանը դարձել է Եվրոպական համալսարանական խաղերի (EUG) ծրագրով անցկացվող պարա սեղանի թենիսի առաջնության բրոնզե մեդալակիր:

Նրան ուղեկցել է մարզիչ Ռիմա Բեգոյանը:

Հունգարիայի Դեբրեցեն եւ Միշկոլց քաղաքներում ավարտված խաղերում ՀՊՏՀ սեղանի թենիսի աղջիկների հավաքականը 16 թիմերի մրցապայքարում զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը: Թիմի կազմում հանդես են եկել Ասյա Պողոսյանը, Ռիմա Խլղաթյանը եւ Մանե Ղազարյանը:

Թիմի մարզիչն է ՀՀ սեղանի թենիսի ազգային հավաքականի մարզիչ, ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների եւ քաղպաշտպանության ամբիոնի դասախոս Մեսրոպ Ղուկասյանը:

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանի խոսքով՝ թենիսիստները հանդես են բերել մարզական բարձր պատրաստականություն, կամային որակներ եւ պայքարել են մինչեւ վերջ:

Ենթախմբում, որում ընդգրկված էին Մեծ Բրիտանիայի Լոնդոնի տնտեսագիտության եւ քաղաքագիտության դպրոցը, Թուրքիայի Ս. Դեմիրելի համալսարանը եւ Ալբանիայի համալսարանը, մեր հավաքականը երեք հաղթանակ է տարել, իսկ քառորդ եզրափակչում պարտվել է մրցաշարի ապագա չեմպիոնին՝ Զագրեբի համալսարանի թիմին: Անհատական պայքարում եւ զուգախաղում մեր աղջիկները սահմանափակվել են մեկական հաղթանակով:

ՖՈՒՏԲՈԼԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԵՐԿԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2024 թվականի Օլիմպիական խաղերի ֆուտբոլի մրցաշարի խմբային փուլի 1-ին տուրի՝ Արգենտինայի ազգային հավաքականի եւ Մարոկկոյի սկանդալային հանդիպումը (1:2) մտել է համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ՝ որպես ամենաերկար խաղ:

Հանդիպման մեկնարկային սուլիչը հնչել է Երեւանի ժամանակով 17:00-ին: Հաշվի առնելով խաղի հետաձգումն ու վերսկսումը՝ հանդիպումն ավարտվել է Երեւանի ժամանակով 21:07-ին: Այսպիսով՝ խաղը տեւել է 4 ժամ 7 րոպե:

Հիշեցնենք, որ հանդիպման 90+16-րդ րոպեին՝ Արգենտինայի հավաքականի կիսապաշտպան Քրիստիան Մեդինայի գոլից հետո, որի շնորհիվ հանդիպման հաշիվը հավասարվեց, ճայթրուկներ են նետվել հարավամերիկյան թիմի խաղացողների վրա: Բացի այդ, խաղադաշտ են վազել Մարոկկոյի հավաքականի երկրպագուները: Խաղն ընդհատվել է անկարգությունների պատճառով:

Երկու ժամ անց՝ հանդիպման վերսկսումից հետո, արգենտինացիների երկրորդ գոլը չեղարկվել է խաղից դուրս իրավիճակի պատճառով, ինչի արդյունքում Մարոկկոն 2:1 հաշվով հաղթանակ է տարել:

«ՍԻՄՖՈՆԻԿ ՋԵՔՍՈՆ»

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

«Ֆասթ բանկի» աջակցությամբ Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում օրերս կայացել է «Սիմֆոնիկ Ջեքսոն» համերգային ծրագիրը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ միահյուսվել են դասական սիմֆոնիկ երաժշտությունն ու փոփի արքա, լեգենդար Մայքլ Ջեքսոնի հանրահայտ ստեղծագործությունները: «Billie Jean»-ը, «Remember the Time»-ը, «You Are Not Alone»-ը եւ Ջեքսոնի մյուս գլուխգործոցները հնչել են տարբերվող մատուցմամբ ու լուծումներով՝ հարստացված հայկական դուդուկի ելեւէջներով:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանը վստահեցնում է՝ «Սիմֆոնիկ Ջեքսոնի» նման նախագծերն օգնում են ավելի շատ մարդկանց ճանաչել սիմֆոնիկ երաժշտությունը եւ նվագախմբի աշխատանքը. «Մենք հավատում ենք երաժշտության ուժով մարդկանց միավորմանը եւ ներքին կատարելագործման ու հոգեւոր վերելքի ձգտմանը: «Ֆասթ բանկը» եւ «Ֆասթեքսը» մեծ սիրով արձագանքեցին աջակցելու մեր խնդրանքին, համերգի մեր գաղափարին: Իսկապես շնորհակալ եմ մեր գաղափարակիցներին», - ասել է Սերգեյ Սմբատյանը:

Բարձրակարգ երաժշտությունն ավելի ճանաչելի դարձնելու, համաշխարհային լեգենդների ստեղծագործությունները հայկական բեմերից եւ հայկական ելեւէջներով հանդիսատեսին ներկայացնելու գաղափարը կարեւորելով՝ «Սիմֆոնիկ Ջեքսոնի» գլխավոր գործընկեր «Ֆասթ բանկ»-ը ապագայում եւս շարունակելու է աջակցել մշակութային նմանատիպ նախագծերին:

● *Հուլիսի 29-ին՝ ժամը 20:30-ին, թատրոն տանիքում կցուցադրվի «Մեծն Գեթսբի» ներկայացումը՝ Ֆ. Ֆիցջերալդի համանուն ստեղծագործության հիման վրա: Տոմսերի արժեքը՝ 6000-7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ ղեsf է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Թերեզա Հայրապետյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն): Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Տարիքային կենսաթոշակի իրավունքը ձեռք բերելու դեպքում արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության կամ մասնակի կենսաթոշակի փոխարեն, անկախ կենսաթոշակառուի դիմումից՝ նշանակվում է տարիքային կենսաթոշակ, իսկ հաշմանդամության կենսաթոշակ կամ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու կամ այդ իրավունքը ձեռք բերելու դեպքում կենսաթոշակի տեսակը փոխվում է՝ կենսաթոշակառուի գրավոր դիմումի համաձայն:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Մի cարf բանկերի հեs կնfել եմ ավանդային ղայմանագrեr: Աrդյոf ղեsությունը, բանկը կամ այլ կազմակեrղություն եrաcխավոrո՞ւմ է դrանf:

Ռուզաննա Մելքոնյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, Ձեր ավանդները երաշխավորվում են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից, ընդ որում երեշխավորված է թե՛ ավանդի մայր գումարը, թե՛ դրա նկատմամբ հաշվարկվող տոկոսը: «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով երաշխավորված ավանդի (մայր գումար եւ հաշվարկված տոկոս) չափերն են՝

ա) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասը միլիոն հայկական դրամ է,

բ) եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժութային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը հինգ միլիոն հայկական դրամ է:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ավանդատուն ունի ավանդներ ՀՀ տարածքում գործող մի քանի բանկերում, ապա նրա ավանդները երաշխավորվում են յուրաքանչյուր բանկում առանձին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Դուդուկահար Արսեն Պետրոսյանը հուլիսի 25-ին համերգով հանդես է եկել Ֆրանսիայում անցկացվող հեղինակավոր Un Violon sur le Sable փառատոնին՝ 40 հազար հանդիսատեսի առջեւ ներկայացնելով հայկական ծիրանափողը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

2011
Ժողովուրդ
1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11+ 17	+27 + 30
Կոտայքի լեռներ	+10 + 13	+24 + 27
Կոտայքի նախալեռներ	+18 + 21	+30 + 33
Գեղարքունիք	+ 7 + 11	+24 + 28
Լոռի	+ 9 + 14	+25 + 28
Տավուշ	+14 + 19	+29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9	+23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20	+29 + 33
Արարատ	+19 + 21	+34 + 36
Արմավիր	+18 + 20	+34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10	+24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 19	+33 + 35
Սյունիքի հովիտներ	+18 + 21	+32 + 36
Սյունիքի նախալեռներ	+12 + 16	+25 + 28
ԼՂՀ	+12 + 15	+24 + 26
Երեւան	+19 + 22	+34 + 37

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*